



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Թ Ի Վ 5**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏԻ**

**Օրակարգում՝**

1. Դեկանի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Բացելով առցանց կայացող նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից առցանց նիստին մասնակցում է 26-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

Այնուհետև նիստը վարելու համար առաջադրվեց պրոֆ. Վ. Գաբրիելյանի թեկնածությունը, և նա միաձայն ընտրությամբ ստանձնեց նախագահի պարտականությունները, ընտրվեց նիստի քարտուղար (պրոֆ. Ա. Մակարյան):

Սահմանվեց ելույթների ժամանակացույց՝ դեկանի հաշվետվության համար՝ 30 րոպե, իսկ անդամների՝ 3-5 րոպե:

Գիտխորհուրդո արձանագրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր տարեկան հաշվետվության մեջ անդրադարձել է ուսումնական, կրթական, կազմակերպչական, գիտական բազում հարցերի: Քանի որ գիտխորհրդի անդամներին նախապես բաժանվել էր դեկանի զեկուցման նախագիծը, որոշվեց միանգամից անցնել մտքերի փոխանակման:

Կից ներկայացվում է հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի 2019-20 ուստարվա հաշվետվությունը.

Հայ բանասիրության ֆակուլտետում ներկա դրությամբ ուսանում են 471 ուսանողներ, որոնցից բակալավրիատում՝ առկա ուսուցմամբ՝ 351, հեռակա ուսուցմամբ՝ 55, մագիստրատուրայում՝ առկա ուսուցմամբ՝ 49, հեռակա ուսուցմամբ՝ 16: 0,5 և բարձր հաստիքով աշխատող դասախոսների թիվը 55 է, որոնցից դոկտոր-պրոֆեսորներ՝ 10, դոցենտներ՝ 41, դասախոսներ՝ 6: Ասպիրանտուրայում առկա ուսուցմամբ սովորում են 10, հեռակա ուսուցմամբ՝ 5, հայցորդները 8-ն են: Ֆակուլտետի յոթ մագիստրանտներ մասնակցել են ասպիրանտուրայի անվճար դասընթացներին:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում կայացել է գիտխորհրդի առկա և հեռավար վեց նիստ, որը պահանջվող քանակից պակաս է, ինչը բացատրելի է ստեղծված առողջապահական, կրթական ու գիտական ոլորտների ոչ բնական ընթացքներով: Այդ նիստերի ընթացքում լսվել են ամբիոնների հաշվետվություններ, քննարկվել են ուսումնական, գիտական, կրթական, աշխատանքային բազում հարցեր, հաստատվել ուսումնական ծրագրեր ու դասընթացներ: Ֆակուլտետում գործում է գիտական աստիճաններ շնորհող <<գրականագիտություն>> 012 թվանիշով խորհուրդը, որը թեև մի քանի գիտական թեմաներ է հաստատել, կազմակերպել երկու թեկնածուական աշխատանքների պաշտպանություն, սակայն այլ ցանկալի գործունեություն չի ունեցել՝ ավարտուն աշխատանքներ չլինելու պատճառով: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ գնալով ոչ միայն նվազում, այլև իսպառ վերանում են մանավանդ դոկտորի աստիճանի ներկայացվող աշխատանքները, որը արդեն վաղուց իր ողբերգական հետևանքներն է թողնում գիտության ու կրթության բնականոն զարգացման վրա: Այս իրողության պատճառները շատ են՝ գիտական աստիճանների համար սահմանված վարձավճարների չնչինությունը, գիտության թեկնածուների սոցիալական ծանր վիճակը, դոկտորի նկատմամբ հասարակական շրջանակների ու որոշ պաշտոնյաների ունեցած վարկաբեկիչ վերաբերմունքը..., բայց մանավանդ այն <<օրենքները>>, որոնք մշակվում ու առաջադրվում են վերադաս մարմինների կողմից, որոնք բարոյալքում ու հողին են հավասարեցնում գիտությանը նվիրելու կադրերի պատրաստակամությունը:

Նշենք, որ թեև ֆակուլտետի ամբիոնները սերտ համագործակցության մեջ են համալսարանի ասպիրանտուրայի բաժնի հետ, սակայն այդպես էլ ասպիրանտուրա դիմողներ չկան և թափուր են մնում անգամ անվճար ուսուցման տեղերը:

Ֆակուլտետի երկու ամբիոններ՝ հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության, ՀՀ գիտության կոմիտեի շրջանակներում իրականացրել են պայմանագրային-ֆինանսական թեմաներ: Ֆակուլտետում լսվել են այդ թեմաների կատարողականների հաշվետվությունները, տրվել են կարծիքներ և որոշումներ: Հաշվետու շրջանում ֆակուլտետի դասախոսները տպագրել են 14 անուն գրքեր (մենագրություններ, ձեռնարկներ, ուսումնասիրություններ, մեթոդական աշխատանքներ):

Հաշվետու շրջանում ֆակուլտետում գործել են ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը՝ ուսխորհուրդը կազմակերպել է առկա և հեռավար շուրջ տասնչորս միջոցառումներ, ՈւԳԸ-ն՝ երկու:

Ֆակուլտետի կոլեկտիվի և ուսանողության հետ տարվող երկրագիտական, սոցիալական, դաստիարակչական, հայրենասիրական և այլ միջոցառումները ևս մեծ անկում են ապրել: Ստեղծված քաղաքական, ազգային ու բարոյահոգեբանական պայմանները խանգարել են նման աշխատանքներ տանելուն, աշխատանքներ, որոնք շատ կարևոր են բանիմաց և ազգային նկարագիր ունեցող քաղաքացիներ ձևավորելու համար:

2019-20 ուստարվա ընթացքում ֆակուլտետում կարճաժամկետ դասընթացներ են անցել արտասահմանցի (Ֆրանսիայից, Գերմանիայից, բալկանյան երկրներից, Պարսկաստանից) մի քանի մագիստրանտներ, ուսանողներ, ասպիրանտներ:

Ֆակուլտետում կազմակերպվել է <<բաց դաս>>՝ կապված բանաստեղծ Մ. Զարիֆյանի արխիվը Հայաստան բերվելու հետ:

Չնայած այն բանին, որ ֆակուլտետի բոլոր վեց ամբիոնների դասախոսներից շատերը գրել ու հրատարակել են գրքեր, մենագրություններ, ուսումնասիրություններ, ֆակուլտետում կազմակերպվել են Լ. Շանթի և Եր. Օտյանի 150-ամյակներին, Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակին (վերջինս Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ համատեղ) նվիրված գիտական նստաշրջաններ, հայոց լեզվի ամբիոնի կողմից կազմակերպվել է «Արդի հայերենի բառապաշարին» վերաբերող գիտաժողով, ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած՝ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովին: Այդուհանդերձ սակավ է եղել ֆակուլտետի ներդրումը բուհական և հանրապետական գիտական նստաշրջաններին, կոնֆերանսներին, խորհրդակցություններին: Պատճառը մեկն է՝ նման միջոցառումներ պարզապես չեն եղել և, որը ավելի ցավալի է, դրանք չեն խրախուսվել և սատարվել վերին օղակների կողմից: Սրան հակառակ՝ ֆակուլտետը ակտիվ մասնակցություն է ունեցել ներհամալսարանական աշխատանքային կյանքին, մասնակցել համալսարանի գիտական խորհրդում տեղի ունեցած հարցերի քննարկմանը, բանավոր և գրավոր զեկուցագրերով հանդես եկել առաջարկներով ու տեսակետներով, որոնք վերաբերել են գիտական, կրթական, աշխատանքային խնդիրներին, ուսումնական ծրագրերի մշակումներին, կրթական չափորոշիչների, նախագծերի ճշգրտումներին, համալսարանական կյանքի այլևայլ ոլորտներին: Ֆակուլտետի ամբիոնների դասախոսների մեծ մասը, թեև ոչ նախկին ծավալներով, շարունակել են համագործակցել հանրապետության տարբեր շրջանների և Երևան քաղաքի դպրոցների, թանգարանների, կրթական ու մշակութային օջախների, հիմնարկների, միությունների, գիտական կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ՀՀ գրողների միության, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Մատենադարանի և այլն:

Հայ բանասիրության ֆակուլտետ ընդունված առաջին կուրսեցիների համար կազմակերպվել է դիմավորում, կայացել է <<բաց դաս>> Կոմիտասի անվան թանգարանում և պանթեոնում: Ֆակուլտետի մի շարք առաջատար գիտնականներ իրենց մասնակցությունն են ունեցել ԵՊՀ գրահրատարկչության, ՀՀ Լեզվի բարձրագույն խորհրդի, հանրապետական օլիմպիադաների, Նախագահի և պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովների, հայ գրողների թանգարանների գիտական խորհուրդների աշխատանքներին:

Ֆակուլտետը որոշ չափով համագործակցել է համալսարանի մի քանի ֆակուլտետների հետ, <<Լեզվի օրվա>> և <<գիրք նվիրելու օրվա>> կապակցությամբ իրականացրել միջոցառումներ: <<Վերնատուն>> ընթերցասրահը համալրվել է նոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որոնք նվիրել են ուսանողները և դասախոսները: Ուսումնական աշխատանքները կազմակերպելու նպատակով ֆակուլտետում իրականացվել են մի շարք այլ աշխատանքներ: Դրանք բազմաբնույթ են եղել: Թվարկենք դրանց միայն մի մասը.

Ուսանողների պրակտիկաները կազմակերպվել են առցանց:

Նախապատրաստական մեծ աշխատանքներ էին տարվել <<ԵՊՀ-ն այսօր>> էքսպոզիցիոնալ կազմակերպելու ուղղությամբ, սակայն, ցավոք, այն չիրականացավ:

Ֆակուլտետը պատրաստել և ռեկտորատ է ներկայացրել ԵՊՀ կրթական ծրագրերի համար սահմանված դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջները:

Ֆակուլտետի դասախոսները մասնակցել են ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման ծրագրերին ու դասընթացներին:

Ֆակուլտետի կրթական ստորաբաժանումներում մշակվել և իրականացվում են մագիստրոսական կրթական ծրագրերի մոնիթորինգի պահանջները, շտկվել ու ճշգրտվել են նկատված բացթողումները, հատկապես ուշադրություն է դարձվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների առաջադրման, ընտրության, դեկավարման և գրախոսման գործընթացներին:

Ֆակուլտետը իր առաջարկություններն է կատարել ԲՈԿ-ի կանոնադրության քննարկումներին, մի քանի անգամ անդրադարձել է «Բարձրագույն կրթության և գիտության բարեփոխումների» նախագծին, որի ընդունման դեպքում շատ դրույթներ իրականում չարափոխությունների հետք են թողնելու:

Ֆակուլտետը նախապատրաստել էր 2019-20 ուստարվա դպրոցականների հանրապետական օլիմպիադայի՝ հայոց լեզու և գրականություն առարկայի անցկացման գործընթացը, սակայն օբյեկտիվ պատճառներով այն չկայացավ: Չկայացավ նաև սփյուռքահայ մտավորական, գրող, գրականագետ Մինաս Գոճոյանի հետ նախապես պայմանավորված դասախոսությունների շարքը, որը կարող էր շատ օգտակար լինել ուսանողության համար:

Ֆակուլտետի դասախոսների մի մասը շարունակել են իրենց ակտիվ աշխատանքները ծավալել հանրապետական մասնագիտական մամուլի խմբագրական խորհուրդների կազմում («Հայագիտական հարցեր», «Բանբեր Երևանի համալսարանի», «Գրական թերթ», «Գիտական Արցախ», «Լեզու և լեզվաբանություն», «Լրաբեր» և այլն):

Վերանայվել և ճշգրտվել են հայ բանասիրության ֆակուլտետ ընդունվելու ամենամյա «Դիմորդի ուղեցույց» տեղեկատվականի տվյալները:

Կազմվել և ուսումնական մաս է ներկայացվել ֆակուլտետի տարեկան գիտական հաշվետվությունը:

Ֆակուլտետի պրոֆեսորներից մի քանիսը պետական մրցանակաբաշխությունների խորհուրդների անդամներ են, գրական մրցանակների հանձնաժողովների նախագահներ կամ անդամներ:

Ֆակուլտետը իր քաղաքացիական ու մասնագիտական ակտիվ մասնակցությունն է ունեցել հասարակական ու կրթական ոլորտներին վերաբերող ԵՊՀ-ում իրականացված կամ իրականացվող նախագծերի, ծրագրերի, որոշումների ու առաջարկների քննարկումներին, կատարել հայտարարություններ, ընդունել որոշումներ, առաջարկել լուծումներ, պատասխանել հարյուրավոր պաշտոնական գրությունների:

Ֆակուլտետի երկու ուսանող արժանացել են Հակոբ Կարապենցի անվան գրական մրցանակի:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի մասնաշենքում տեղադրվել է ճանաչված լեզվաբան, տարիներ շարունակ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, հայոց լեզվի, ապա և հայոց լեզվի պատմության ամբիոնների վարիչ աշխատած Հովհաննես Բարսեղյանի կիսանդրին, ֆակուլտետի երկրորդ հարկի սրահում փակցվել են վերջերս մահացած ճանաչված գիտնականների և մանկավարժների լուսանկարները: Ֆակուլտետում իրականացվել են նաև մի շարք կարգապահական, կարգավորող ու նախաձեռնողական միջոցառումներ, որոնք կապված են եղել մեր կյանքում տեղի ունեցած նոր երևույթների ու փոփոխությունների հետ. սահմանվել են հերթապահություններ, կազմակերպվել են աշխատանքի, դասերի և քննությունների հեռավար անցկացումներ, հավաքվել են հագուստի, դեղորայքի, սննդի օգնություններ, «Հայկական հիմնադրամին» է փոխանցվել որոշակի գումար (սրանից գատ, ֆակուլտետի դասախոսների մի մասը անհատական դրամական փոխանցումներ է կատարել զանազան ֆոնդերի): Ֆակուլտետի ուսանողները ընդգրկվել են տարբեր խնամակալական, հովանավորչական և կազմակերպչական աշխատանքներում, մասնակցել դրամահավաքների, հիգիենիկ պարագաների ձեռքբերմանը, աջակցել «Հանուն զինվորի» նախաձեռնությանը: Գիտական, կրթական, աշխատանքային ու կազմակերպչական բազում աշխատանքներ են կատարվել ֆակուլտետների բոլոր վեց ամբիոններում:



Հայոց լեզվի ամբիոնը համալսարանի մեծ ամբիոններից մեկն է և տարիներ շարունակ հսկայական գործունեություն է ծավալում ինչպես հայ բանասիրության, այնպես էլ հումանիտար և ճշգրիտ ֆակուլտետներում մայրենի լեզվի ուսուցման ու զարգացման հայանվեր գործում: Ամբիոնը վերջին մեկ տարվա ընթացքում հաջողությամբ իրականացրել է ուսումնական պլաններով նախատեսված բոլոր ծրագրերն ու ծանրաբեռնվածությունները, տպագրել չորս մենագրություն, երկու բառարան, ուսումնասօժանդակ մեկ ձեռնարկ, տպագրության հանձնել ևս երկու մենագրություն: Ամբիոնի անդամները տպագրել են երկու տասնյակ գիտական հոդվածներ, հեղինակային խումբը (ղեկավար պրոֆ. Յու. Ավետիսյան) հրատարակել է գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Ամբիոնը ավարտել է Գիտության պետական կոմիտեի հետ կնքված թեմատիկ ֆինանսական պայմանագրային աշխատանքները: Ամբիոնի առաջատար գիտնականները ղեկավարում են ասպիրանտական, հայցորդական աշխատանքներ, որոնց թիվը հասնում է յոթի: Ամբիոնը մշակել և իրականացնում է մագիստրոսական դասընթացի նոր ծրագիր, դասախոսությունների շարք է կազմակերպել Իրավաբանական ակադեմիայում և Վերաքննիչ դատարանում, տեխնիկական նոր միջոցներ ձեռք բերել՝ ուսուցումը ավելի ժամանակակից եղանակներով կազմակերպելու համար, մշակել մեթոդական նոր մոտեցումներ՝ գործնական աշխատանքները բարձր մակարդակով անցկացնելու համար, առաջին կուրսեցիների համար ներկայումս պատրաստում է խոսքի մշակույթի առարկան ընդգրկող տեսա-գործնական նոր ձեռնարկ:

Հայոց լեզվի պատմության ամբիոնը համալսարանի տարբեր ֆակուլտետներում դասավանդում է անհրաժեշտ մասնագիտական մի շարք առարկաներ, որոնց թվում <<Գրաբար>>, <<Բարբառագիտություն>>, <<Միջին հայերեն>> առարկաները, որոնք այլ բուհերում գրեթե չեն դասավանդվում: Ամբիոնը վերանայել է դասավանդվող առարկաների ծրագրերը, ճշգրտել առարկայական քննությունների հարցաշարերն ու քննական տոմսերը: Ամբիոնի մի քանի դասախոսներ մասնակցել են գիտական ժողովների, սեմինարների, քննարկումների: Ամբիոնը շահել է <<Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը>> հանրապետական գիտաժողովի ֆինանսավորումը, որը, սակայն, համավարակի պատճառով չի իրականացվում: Հանրապետական մամուլում ամբիոնի անդամները տպագրել են տասնութ գիտական հոդված, տպագրել երկու աշխատություն, հրատարակել <<Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա>>, ավարտին հասցրել ՀՀ գիտության պետական կոմիտեի պայմանագրային ֆինանսավորմամբ թեման (ղեկավար Ա. Աբաջյան), որի արդյունքները տպագրվել են առանձին գրքով: Ամբիոնում ուսանում են առկա ուսուցմամբ մեկ ասպիրանտ և երեք հայցորդներ:

Ընդհանուր լեզվաբանության ամբիոնը մասնագիտական մամուլում տպագրել է յոթ գիտական հոդվածներ: Ամբիոնը հումանիտար ֆակուլտետներում և հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդում է ընդհանուր լեզվաբանական առարկաներ, որոնք խիստ անհրաժեշտ են ինչպես այլ լեզուների, այնպես էլ հայոց լեզվի զարգացման առումով: Ցավոք, որոշ ֆակուլտետներում գնալով կրճատվում են լեզվաբանական առարկաների ժամաքանակները՝ չհասկանալով, որ չի կարող լիարժեք անգլերենի, պարսկերենի և առհասարակ ցանկացած լեզվի մասնագետ ու գիտնական դառնալ, առանց ընդհանուր լեզվաբանությանը տիրապետելու:

Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնը հաշվետու տարում, ինչպես և ֆակուլտետի մյուս ամբիոնները, ունեցել է ժամաքանակների մեծ կորուստ, որի հետևանքով շատ դասախոսների հաստիքները կտրականապես նվազել են: Ամբիոնը կազմակերպչական աշխատանքներ է իրականացրել՝ Հովհ. Թումանյանի, Կոմիտասի, Եր. Օտյանի, Լ. Շանթի, Ղ. Ալիշանի հոբելյանական ամյակները նշելով: Հանրապետական ու բուհական այդ գիտաժողովներում ընդգրկվել են նաև ՀՀ գրողների միությունը, գրականության ինստիտուտը: Տպագրման ընթացքում են գիտաժողովի նյութերը, հայ գրականության պատմության հետագա զարգացման համար խիստ անհրաժեշտ «Հայ նոր գրականության պատմություն» բուհական ձեռնարկը (հեղինակ Ս. Մուրադյան): Ս. Մուրադյանը լույս է ընծայել Հովհ. Շիրազի «Անտիպ էջեր» գրքի Բ. և Գ. հատորները: Պրոֆ. Սաֆարյանը տպագրել է «Գրողի կերպարը և անհատականությունը» մենագրությունը, պրոֆ. Ալ. Մակարյանը՝ «Գրականագիտության տիրույթներում» գիրքը: Ամբիոնի անդամները տպագրել են տասնհինգ գիտական հոդվածներ: Ամբիոնի ասպիրանտը ժամանակին ավարտել է թեկնածուական ատենախոսությունը, տպագրել հոդվածներ, ամբիոնի երկու հայցորդները տպագրել են գիտական հոդվածներ: Ամբիոնը ակտիվորեն մասնակցել է հայոց լեզվի և գրականության չափորոշիչների մշակման աշխատանքներին, գրախոսել կամ արտաքին կարծիքներ տվել գիտական աստիճաններ հայցող մի քանի աշխատանքների, անդամակցել հայ գրողների թանգարաններում գործող գիտական խորհուրդների աշխատանքներին, հանդես եկել զեկուցումով:

Հայ նորագույն գրականության ամբիոնը ստեղծել է մագիստրոսական նոր դասընթաց՝ «Հայ նորագույն գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում» (ղեկավար Ս. Գրիգորյան): Ամբիոնում ձևավորվել է «Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն» մասնագիտական մագիստրոսական խումբ: Ամբիոնի դոցենտ Ա. Արզումանյանը տպագրել է «Գրականության դասավանդման մեթոդիկա» գրքի երկրորդ մասը, Ս. Ղազարյանը՝ Մ. Բանինգհեմի «Ժամերը» գիրքը: Ամբիոնը պատրաստել է «Մաթևոսյանական ընթերցումներ» չորրորդ նստաշրջանը, որը հայտնի պատճառներով չի իրականացվում: Ամբիոնի անդամները տպագրել են 12 գիտական հոդվածներ, գրքերի առաջաբաններ, գրախոսել են թեկնածուական աշխատանքներ: Ամբիոնի ասպիրանտը հաջողությամբ հանձնել է ասպիրանտական մինիմում քննությունները:

Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի անդամները տպագրել են տասը գիտական հոդվածներ, տպագրության ներկայացրել ևս տասը: Ամբիոնի անդամները զեկուցումներ են ունեցել Հովհ. Թումանյանի, Լ. Շանթի, Եր. Օտյանի, Ղ. Ալիշանի հոբելյաններին նվիրված գիտաժողովներում: Պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Ա. Ջրբաշյանը և Մ. Ջանփոլադյանը մասնակցել են «Թումանյանական հանրագիտարանի» ստեղծման աշխատանքներին: Գիրքն արդեն լույս է տեսել: Ամբիոնը արդիականացրել է մի շարք մագիստրոսական ծրագրեր, թարմացրել բակալավրիատի դասընթացները: Ամբիոնի աշխատանքները բարձր են գնահատվել ուսանողական սոցիալացումներում:

Վերոհիշյալ աշխատանքներից գատ, ֆակուլտետն ու ամբիոնները իրականացրել են նաև բազում այլ գործեր, որոնք կապված են եղել ընթացս իրականացվող ուսումնական, գիտական կազմակերպչական գործընթացների հետ, որոնց ընթացքում, հարկավ, եղել են նաև բացթողումներ, ինչպես և առկա են խնդիրներ, որոնցից մի քանիսի մասին արժե խոսել.

Չնայած այն բանին, որ ուսումնական հաշվետու տարում դասերի մեծ մասը ընթացել են հեռավար կարգով, դասախոսները և ուսանողները ընդգրկվել են դասատվության նոր ձևերի մեջ, սակայն բոլոր դասախոսներն ու ուսանողները չէ, որ լիարժեքորեն տիրապետում են այդ գործընթացներին. պատճառները շատ են՝ փորձի պակաս, տեխնիկայի անկատարություն, գործիքակազմի պակաս, դասերի հաճախումների հսկողության անհնարինություն և այլն:

Համալսարանի գրադարանային ֆոնդը (այդ թվում և մեր մասնաշենքի <<Վերնատուն>> ընթերցասրահը) արդեն տարիներ շարունակ պետական շրջանակներից չի համալրվում մասնագիտական գրականությամբ:

Այդպես էլ լիարժեքորեն չի լուծվել ԵՊՀ-ում տպագրվող գրքերի ճակատագիրը: Մենագրություններ և գրքեր տպագրող հեղինակներին պետք է ավելի շատ օրինակներ տրվեն, քան տրվում են մինչև այժմ, այդ գրքերը պետք է հանվեն վաճառքի ուսանողության շրջանում: Այլապես ո՞ւմ համար են գրվում:

Ֆակուլտետ դիմող ասպիրանտների և հայցորդների քանակը գնալով պակասում է՝ հատկապես գրաբարի, ընդհանուր լեզվաբանության և մի քանի այլ «նեղ» մասնագիտությունների գծով:

Շարունակում է խնդրահարույց մնալ նվազ ծանրաբեռնվածությամբ աշխատող դասախոսների սոցիալական վիճակը:

Ֆակուլտետը դժգոհ է այն արհեստական կրճատումից, որն իրականացվեց այս տարի հայ բանասիրության ֆակուլտետ ընդունվող 75 դիմորդների նկատմամբ, որի արդյունքում դուրս մնացին միջին գնահատականներ ստացած տասնյակ դիմորդներ, ովքեր ի վիճակի էին վճարել ուսման վարձը և հեռանկարում դառնալ հայոց լեզվի և գրականության մասնագետներ, որոնց կարիքը այսօր շատ է զգացվում հայ դպրոցում:

Ֆակուլտետն իր կտրական բողոքն է հայտնում նախարարությանը, ռեկտորատի և որոշ ֆակուլտետների կողմից հայոց լեզու և գրականություն առարկան բուհերի ընդունելության քննություններից հանելու որոշումների դեմ, որը հակասում է ՀՀ լեզվի մասին օրենքին:

Ֆակուլտետն իր անհամաձայնությունն է հայտնում ընդունվելիք այն նախագծին, ըստ որի բուհերի ռեկտորների պաշտոնները պետք է նշանակովի լինեն վերադաս մարմինների կողմից»:

**Ելույթ ունեցան** գիտխորհրդի մի շարք անդամներ, այդ թվում՝ ամբիոնների վարիչներ պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաշյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը և Վ. Պետրոսյանը, ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի դոց. Ա. Տեր-Մինասյանը, գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի պրոֆ. Ժ. Քալանթարյանը, մագիստրատուրայի ուսանող Ա. Պողոսյանը և այլք: Նրանք բոլորը բարձր գնահատեցին ֆակուլտետի դեկանի մեկ տարում կատարած աշխատանքները, մասնավորապես համավարակի ընթացքում ծավալած գիտամանկավարժական և կազմակերպչական գործունեությունը: Առանձնապես շեշտվեց այն հանգամանքը, որ պրոֆ. Ա. Ավագյանը այն սակավ կազմակերպիչներից է, որն աշխատանքային բոլոր օրերին մշտապես գտնվում է ֆակուլտետում և հետևում ոչ միայն առցանց ընթացող դասընթացներին, այլև հնարավորինս լուծում առաջ եկող խնդիրները, իրականացնում ռեկտորատի հանձնարարությունները, լուծում կրթական, ուսումնական, գիտական ու աշխատանքային այն բոլոր հարցերը, որոնք նախատեսված են ուսումնական գործընթացներով և կամ որոնք առաջանում են ընթացքում:

Ելույթ ունեցողները դեկանի կատարած աշխատանքները գնահատեցին բարձր, և **որոշվեց**, ըստ ընդունված կարգի, դրանք համարել բավարար:

Ընթացիկ հարցերի քննարկման ժամանակ շոշափվեցին ուսումնական մի շարք հարցեր: Գիտխորհրդի բոլոր անդամները մեկ անգամ ևս իրենց խոր մտահոգությունը հայտնեցին ՀՀ ԿԳՄՄ-ի ընդունած հապճեպ ու անտրամաբանական որոշումների վերաբերյալ՝ կապված գործող օրենքում փոփոխությունների հարցերին (բուհերի ռեկտորների նշանակում նախարարի կողմից, անձնակազմի աշխատանքային տարիքային սահմանափակումներ...), մյուս կողմից՝ ապագային, օրինակ՝ ընդունելության քննություններից պետական լեզվի՝ հայերենի բացառման կամ էլ կամընտրական տարբերակների ընդունման առիթներով:

**ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ բանասիրության ֆակուլտետի՝ դարաբաղյան վերջին պատերազմում զոհված զինվորների պատվին լսարան անվանակոչելու հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – ք. գ. դ., պրոֆեսորներ Ա. Ավագյանը, Ալ. Սակարյանը, Յու. Ավետիսյանը, ք. գ. թ., դոցենտներ Ն. Դիլբարյանը, Ա. Ջրբաշյանը, մագիստրոս Վ. Բերբերյանը, ասպիրանտ Ա. Սողոմյանը և շատ ուրիշներ:

Նշվեց, որ պատերազմի զոհերը, ըստ նախնական տվյալների, երեքն են. ընդ որում՝ նրանցից մեկի ճակատագիրը դեռևս անհայտ է (հեռակա բաժնի 1-ին կուրսի ուսանող), երկրորդը զոհվել է, և ճշգրտվում է նրա՝ ուսանող լինելու կարգավիճակը, սակայն հայտնի է և Եռաբլուրում արդեն հուղարկավորվել երրորդ ուսանողը՝ **Արթուր Գագիկի Սուքիասյանը**: Նա 18 տարեկան էր և գերազանց առաջադիմությամբ միաժամանակ սովորում էր ԵՊՀ-ի 2 ֆակուլտետներում՝ հայ բանասիրության՝ առկա և միջազգային հարաբերությունների՝ հեռակա: Շնորհալի պատանին արդեն հասցրել էր տպագրել գրականագիտական 2 լրջմիտ հոդվածներ (դրանցից մեկը՝ արտասահմանում): Արթուր Սուքիասյանը, բացի այդ, կարատեի՝ «Կիոկուշկին» մարզաձևի պատանեկան առաջնությունների՝ Հայաստանի, Կովկասի ու Եվրոպայի չեմպիոնն էր, և անհրաժեշտ է ֆակուլտետի որևէ լսարանի անվանակոչությամբ հարգել այդ լուսավոր ու վաղամեռիկ պատանու հիշատակը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Ճշգրտումներից հետո դիմել ռեկտորատին՝ թույլատրելու որևէ լսարան անվանակոչելու՝ նվիրված զոհված ուսանողների հիշատակին:

2. **Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի՝ առկա ուսուցման ասպիրանտուրա վճարովի, պայմանագրային հիմունքներով ընդունված՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի **Կասո Անթերանիկի Էբրահիմի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – ք. գ. դ., պրոֆեսորներ Ա. Ավագյանը, Ա. Աբաշյանը, Յու. Ավետիսյանը և ք. գ. թ., դոցենտներ Ն. Դիլբարյանն ու Վ. Պետրոսյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - 1. ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի՝ առկա ուսուցման ասպիրանտուրա վճարովի, պայմանագրային հիմունքներով ընդունված՝ Իրանի Բուլամական Հանրապետության քաղաքացի **Կամո Անթերանիկի Էփրահիմի** ատենախոսության թեմա հաստատել <<Պարսկերենից փոխառյալ կենդանանունները միջին հայերենում և նրանց պատմական զարգացումը արդի արևելահայերենում>>


2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աննա Հենրիկի Աբաջյանին**:

Գիտխորհրդի նախագահող պրոֆ. Վ. Գաբրիելյանը վերջում շնորհակալություն հայտնեց բոլորին և նիստը համարեց փակված:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**



**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**